


Ննսէն աշխատում է ապացուցանել հատեան լեզուի ազգակցութիւնը մէկ կողմից հայերէնի հետ և միւս կողմից հընդ- եւրոպական լեզուների հետ ընդհանրապէս: Հատերէնը, ասում է Ննսէն, բանում է նախնական հընդ—եւրոպական լեզուի և հայերէնի մէջտեղը:

Հատերէնը, եզրակացնում է Ննսէն, հայերէնի մայր լեզուն է, իսկ հատերը՝ հայերի նախահայերը: Ըստ այսմ գաղթել են հայերն իրենց նոր հայրենիքն՝ Հայաստան Կիլիկիայից և հիւսիսային Ասորիքից, սրտեղ և էր հատերի հայրենիքը մօտ 600—540 թ. Ք. ա.

Ննսէնի տեսութիւնն անշուշտ դեռ ևս ըստըստին ապացուցուած չէ և ոչ էլ ընդհանուր ընդունելութիւն գտած: Նատերը չեն ընդունում այդ տեսութեան ճշմարիտ լինելը, իսկ ոմանք ընդունում են: Այս տեսութիւնը մնում է դեռ տեսութիւն: Բայց և այնպէս պ. Հ. Աճառեան (Վասիլ ժողովածու) ներկայացնում է ընթերցողներին այդ տեսութիւնն իբրև գիտական հաստատուն իրողութիւն: Պրօֆ. Ննսէն ինքը խորապէս համոզուած է իր տեսութեանը մէջ և նորանոր ուսումնասիրութիւններով աշխատում է աւելի հիմնաւոր դարձնել այն, որի մասին և այս երկու խօսք զրելը հայ ընթերցողների համար՝ աւելորդ չհամարեցինք: Հայերի ծագումով պէտք է հետաքրքրուին ոչ միայն եւրոպայի գիտնականներն, այլ նաև հայերն իրենք:

Արսաւես Արեղեան.



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Gustave Schlumberger, L'Épopée Byzantine à la fin du dixième siècle. Seconde partie. Basile II le Tueur de Bulgares, Paris, Hachette et C^{ie}. 1900. VI+655 էջ 40.
 Շլումբերգեր, Բիւզանդական էպոպեյան տասներորդ դարու վերջում. երկրորդ մաս, Բազիլեյոս երկրորդ Բուլղարասպանը:
 Գրքիս առաջի հատորը լոյս է տեսել 1898 թ. և այս

հատորի հետ պարունակում է Բիւզանդական պատմութեան X դարի երկրորդ կէսը և XI առաջին քառորդը (1025), Ռոմանոս երկրորդից սկսած մինչև Բազիլէյոս երկրորդի մահը, այն է «Հայկական Հարստութիւն» կոչուած դարաշրջանի ամենափայլուն ժամանակամիջոցը, որը մինչև այն ժամանակ Բիւզանդական կայսրութեան փառաւորագոյն շրջանն էր։ Որքան էլ նշանաւոր է եղել Բազիլէյոս Բ.ի թագաւորութիւնը, նրա մասին պատմական լաւ աղբիւրներ քիչ են պահուել, մինչև որ լոյս հանուեց Յակոբ Անտիոքացի արաբ պատմագիրը, որը շրջանի առաջնակարգ տեղեկատուն է։ Շլումբերգերը օգտուել է նաև հայ աղբիւրներից, գլխաւորապէս Ասողիկից։ Ի նկատի առնելով ոչ միայն «Հարստութեան» ծագումը, այլ նաև Բիւզանդական պատմութեան սերտ կապը հայոց պատմական անցեալի հետ, պէտք է ասենք, որ ընդհանրապէս փրանսիական ակադեմիկ Շլումբերգերի նշանաւոր գործը մեծ կարևորութիւն ունի մեզ համար, իսկ ի մասնաւորի այս երկրորդ հատորի 9-րդ գլուխը (էջ 469—536) համարեա ամբողջովին նուիրուած է հայոց պատմութեան։ Այդ գլխում պատմուած է Բազիլէյոս երկրորդի արշաւանքը Հայաստանի և Վրաստանի դէմ 1020—1022 թ. և Վասպուրականի միացումը Բիւզանդիոնի հետ 1022 թուին։

Louis Bréhier—Les Colonies d'Orientaux en Occident au commencement du moyen-âge. V-e—VIII-e siècle. Mémoire présenté au XIII-e Congrès des Orientalistes à Hambourg, 8-e section (Byzantinische Zeitschrift, B. XII, H. 1—2 (1903), p. 1—39)—Լուի Բրեհիեր—Արևելքի գաղութները Արևմուտքում միջին դարի սկզբում. V—VIII դարը. Յիշատակագիր ներկայացրուած Համբուրգում կայացած Արևելագէտների XIII-րդ կոնգրէսի, 8-րդ հասուածին։

Հեղինակը իւր համար ընտրել է մի շատ գեղեցիկ նպատակ. ցոյց տալ, թէ արևմուտքում հինգից մինչև ութերորդ դարը արևելեան ազգերը ինչ քաղաքակրթա-

կան դեր են կատարել: Այդ ազգերի մէջ առաջին տեղը բռնում էին յոյները, ասորիները և ապա հայեր և ուրիշներ: Դոցա գաղթականութեան գլխաւոր նպատակը վաճառականութիւնն է եղել. Հռովմում վաճառականական ամբողջ թաղ կար և առևտրական որոշ ապրանքներ նոցա ձեռին մի տեսակ մենավաճառութիւն էր: Բայց գոյա ուրիշ դեր էլ էին խաղում. թէ քաղաքական պաշտօնների մէջ մտնելով և թէ մինչև անգամ իբրև եկեղեցականներ իրենց միջից մի քանի պապեր տալով: Հայերի յիշատակութիւնը գտնում ենք նախ 649 թ. Մարտին առաջին պապի Լատրանում կայացրած ժողովում: Ժողովի արձանագրութիւնների մէջ ասուած է, որ նրան մասնակցում էին շորս արքաներ, Յովհաննէս՝ ս. Սաբայից, Թէոդոր՝ Աֆրիկայի մի վանքից, Թալասիոս, Հռովմում հաստատուած հայերի արքան (Thalassius abba presbyter Armenistarum in hac Romana civitate Constitutorum qui appellantur Renati, տես. Mansi, Concilia X p 903) ¹⁾ և Գէորգ՝ Հռովմէացիների Կիլիկիայի արքան: Հայերից հաստատուած վանքը, որի անդամները կոչւում են Renati—Վերստին ծնեալներ, յիշուում է նաև 680 թ. Կոստանդնուպոլսի երրորդ ժողովի արձանագրութեան մէջ (Labbe VI, 609) կայ Renatus վանքի Գէորգ վարդապետի և քահանայի ստորագրութիւնը: Իտալիայի Ռավեննա քաղաքում մի ամբողջ թաղ կոչւում էր Հայաստան (Diehl, Essai sur l'administration byzantine dans l'Exarchat de Ravenne, Paris, 1889 էջ 247—52): Յուստինիանոսի արշաւանքների ժամանակ մեծ թուով հայեր, յոյներ և ասորիներ եկան Իտալիա, որոնք փոքր առ փոքր իրենց ձեռքն առան նաև քաղաքական և եկեղեցական պաշտօնները: Ռավեննայի ս. Վիտալ եկեղեցում կար Իսահակ էքսարխի գերեզմանը, որ հայկական ազնուականներ

1) Համ. Արխուսակես եպիսկոպոս, Հայաստանեայց եկեղեցու պատկերչարգութիւնը. ՍՊԲ. 1904, էջ 212, 213, քաղուած՝ Պալենան, պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878.

բիցն էր (Ad Angellum P. L. CVI, p. 592): Գրիգոր Տուրքազաքից պատմում է (Grégoire de Tours, Histor, Franc. X, 24), որ Յուլիանում 590 թվին տեսել է մի հայ եպիսկոպոս, որը առաջ գերի էր ընկել պարսիկների ձեռքը և իրեն պատմել է պարսիկների յարձակուժը Ասորիքի վրայ և Անտիոքի գրաւումը:

Արևելյիցիների գաղթականութիւնը տարածուած է եղել մինչև Սպանիա, Գաղղիա, Գերմանիա և Անգղիա և բոլորն էլ ընդհանուր «ասորի» անուամբ են յայտնի եղել: «Pendant plus de huit cents ans des Syriens, des Egyptiens, des Arméniens, des Persans, des Asiatiques, des Greck, tous confondus bientôt sous la dénomination de „Syri“, sont venus s'établir dans les principales villes occidentales de l'empire. Leur but était de s'enrichir par le commerce et l'industrie, et on ne voit pas qu'ils soient jamais venus en Occident avec le dessein d'y propager leurs idées» (Bréhier, p. 18): Այդ հանգամանքի շնորհիւ գարերի ընթացքում շատ զօրեղ է եղել այդ ազգերի բարոյական ազդեցութիւնը եւրոպացիների վրայ: Իբրև վաճառականներ նորա ներս են բերել մի շարք արտագրութիւններ և ձեռագործներ, որ միայն արևելքում կար. հաւանական, շինութիւնների և ուրիշ արուեստների համար տուել են արհեստաւորներ և մանաւանդ մնայուն հետքեր են թողել քրիստոնէական եկեղեցու թէ ծէսերի և թէ ներքին կեանքի վրայ: Յօդուածիս հեղինակը այդ բոլոր երևոյթները երեք հատուածի բաժանելով, քննում է մի առ մի, ցար ու ցրիւ վկայութիւնները ի մի ժողովելով և դտելով: Առաջին՝ վաճառականական ներմուծութիւն (էջ 20—22), երկրորդ՝ արուեստական արտադրութիւնների ներմուծութիւն (էջ 22—30) և երրորդ՝ արհելիցիների ազդեցութիւնը արհմուսցիների մետր եւ բարոյական փառաբանութեան վրայ (էջ 30—39 վերջ):

Basil David Korganow, La musique du Caucase (Paris 1903, 8 էջ) — Բ. Կորգանեան, Կովկասի երաժշտու-

Թիւնը: Սա մի դասախօսութիւն է Կովկասի երաժշտութեան մասին, որ պ. Կորդանովը կարգացել է այս տարուայ յունուարի 20 (նոր տոմարով), թէև աւելի շուտ էր տպուած Բեռլինում: Բացատրելով թէ արևելեան երաժշտութիւնը ինչ հանրամարդկային նշանակութիւն ունի և որքան է ազդել եւրոպացի հռչակաւոր երաժշտագէտների վրայ, պ. դասախօսը փորձում է ցոյց տալ թէ որքան կարևոր է ծանօթանալ այդ երաժշտութեան հետ: Ընդհանուր գծերով ցոյց է տրուած հայ և վրացի կիսնական և աշխարհիկ երաժշտութեան առանձնայատկութիւնը:

Mons. Asgjan, La S. Sede es la nazione armena— Գեր. Ասկեան, Ս. աթոռ հայոց ազգի, շարունակաբար 1900—1901 թ. տպուել է մաս մաս Bessarione թերթում: աշխատութիւնը նուիրած է հայոց եկեղեցու պատմութեան: (բովանդակութեան մասին տես Виз. Врем. т. VII, 1900 էջ 785, т. VIII, 1901 էջ 262—263 և էջ 668—669):

Պարսկա—Հնդկաստանի թեմի հայերի թիւը, Նոր-Չաղայի Լրաբեր, 1904, № 2 էջ 1—4: Վիճակագրական մանրարաման թուերը ցոյց են տալիս, որ այդ թեմում ներկայուած ապրում են մերձ 40,000 հայեր, մեծամասնութիւնը աթ գաւառների գիւղերում (30,000), մնացածը 9 քաղաքներում: 1856, 1880, 1888 և 1903 տարիների վիճակագրական բազմատութիւնը ցոյց է տալիս որ հայերը նկատելի աճել են. Հնդկաստանը չհաշուած, Պարսկաստանի հայերը 1903 թ. ունեցել են 5687 տուն, 36,305 շունչ, 99 եկեղեցի և 108 քահանայ:

M. Bittner, Der vom Himmel gefallene Brief Christi in seinen morgenländischen Versionen und Recensionen— Մ. Բիտներ, Թուղթ երկնաւոր, ըստ արևելեան թարգմանութեանց և խմբագրութեանց: Հեղինակը հրատարակել է այդ թղթի յունարէն, հայերէն, ասորերէն, քարշունի, արաբերէն և եթովպերէն բնագրերը հիմնուած ձեռագրերի վրայ, քննել է բնագիրը, համեմատել և գեր-

մաներէն թարգմանել: Աշխատութիւնը հրատարակուելուց առաջ կարգացուել է Վիեննայի գիտութեանց ճեմարանում, 1903 թ. մայիսի 6-ին:

Послание Пилата ко императору Тиберию — Թուղթ Պիղատոսի առ կայսրն Տիրբերիոս, հայերէնից թարգմանուել է ռուսերէն. տես Юбилейный Сборникъ въ честь В. Ө. Миллера, Москва 1900 (стр. 97—99).

Хр. Кучукъ Иоаннесовъ, Старинныя армянскія надписи и старинныя рукописи въ предѣлахъ юго-западной Руси и въ Крыму (Труды Восточ. Ком. И. М. А. О. т. II, 1904, 43 էջ 4⁰ և 13 նկար, մի քանիսը տախտակների վրայ) — Ք. Քուչուկ-Յովհաննիսեան, հայերէն հին արձանագրութիւններ և հին ձեռագրեր հարաւարեւմտեան Ռուսաստանի սահմաններում և Ղրիմում:

Մագիլեվ քաղաքում հայերը վերաբնակուել են XVIII դարու սկզբում, 1743 փայտից շինել են եկեղեցի յանուն անարատ կոյս ս. Աստուածածնի, 1772 վերաշինել են քարից, 1809—1816 թ. այդտեղ էր նստում հայ-կաթոլիկների առաջնորդ Քրիստափորովիչը, որը թաղուած է եկեղեցու բակում: Այժմ քաղաքում կան 25 տուն հայ, որոնք պարապած են կաշէդործութեամբ, սափիան պատրաստելով: Եկեղեցու մէջ կան ս. Աստուածամօր հրաշագործ պատկերը, Գրիգոր Լուսաւորիչը, խորանում՝ ս. Լուսաւորիչ և Հռիփսիմէ, արծաթէ մոմակալ «յիշատակ է աշտանակ» գրութեամբ, զգեստներ, հայ եպիսկոպոսների նըկարներ, 1718 թ. Ամատերգամում տպուած մի շարական, մի ձեռագիր՝ Յաղագս խորհրդոյ հաղորդութեան 1781 թ. և մետրիքական գրքեր 1743—1826, երբ հայոց լեզուի փոխարէն սկսեցին գործածել լեհերէն, իսկ եկեղեցում լատիներէն:

Կամենեց-Պոդոլսկ հայերը գաղթել են XIV դարում և ունիթոսների հետ միանալիս, XVII դարում, ունէին չորս եկեղեցի. 1, Աստուածածնի վերափոխման, 2, Աստուա-

Ճածնի Աւետման, 3, Նիկողայոսի Աքանչեւագործի և 4, ս. Մտեփաննոսի անունով, ըստ այլ վկայութեան նաև 5, ս. Գէորգի և 6, ս. Խաչի եկեղեցիներ (O. Синаупкин, городъ Каменецъ-Подольскій, Кіевъ, 1895. Եզեան, Բռնի միութիւն, ՍՊԲ. 1884 և Մ. Բժշկեանց, Վեն. 1830): Հայերը ունէին մօտ 1200 տուն, եկեղեցիներից Աւետմանը՝ պրավոսլաւների ձեռին է, ս. Նիկողայոս անունով շինուած է քարից, ներսից, հիւսիսային պատի վրայ կայ Մելքիսէթ կաթողիկոսի բարձրաքանդակ պատկերը, որը 1828 թուին մեռնելով այգտեղ է թաղուել: Հայկական եկեղեցու մէջ պահուած են՝ մի արծաթէ սկիհ և հին զգեստներ, բախում կան գերեզմանաքարեր, հայ գրերով և նախկին հայ կոյսերի բնակարանը: Եկեղեցին սկիզբը փայտից էր, 1597 վերաշինուել է քարով, 1602 նորոգուել, 1811 թուին ընկել է հայ ունիթոռների, իսկ 1840 պրավոսլաւների ձեռքը: Նշանաւոր է Աստուածածնի նկարը, ըստ ոմանց X դարից: 1891 թ. կառավարչական կարգադրութեամբ այս եկեղեցու հայերէն ձեռագրերը տարան ս. Պետերբուրգի հասարակաց գրադարանը, այգտեղ մենք առիթ ունեցանք 1901 թ. մանրամասն ցուցակագրելու: Եկեղեցում կան մի հատ Մաշտոց 1740 թ., 8 հայ եպիսկոպոսների և կանոնիկների նկարներ, հարաւային դռան դիմաց 1717 թ. 4 տողանի մի արձանագրութիւն, 2 պատկեր՝ ս. Փայանէի 1650 և Փարբիէլ հրեշտակապետի 1653 թ.: Եկեղեցին շինել է Սինան-Խուբու բէյը, որը կտակով իւր շինութիւնը ազգին է թողել և այդ կտակը 1398 թ. ցարդ պահուած է (Լուսանկարը էջ 10 և Սինանի նկարը՝ էջ 9): Եկեղեցին փայտից էր, 1495 վերաշինել են քարից, որ նորոգուել և մեծացրուել է 1566, 1577, 1756 և 1767 թ. Եկեղեցու բախում կան գերեզմաններ 1763 և 1620 թ. (Բ. Յովհ. էջ 16, 17):

Ժվանից գիւղում կայ հին հայկական եկեղեցի, մէջում հայկական մնացել են. 1, Աստուածածնի Երեման, 2, ս. Պետրոսի, 3, Բարդուղիմէոսի և Ռադէոսի, 4, Գրիգոր Լուսաւորչի և Սեղբեստրոսի, 5, Տրդատի ու Աշխէնի

պատկերները, 6, Երուսաղէմում 1743 տպուած շարական, 7, մեարիքական գրքեր 1718 — 1733 թ.: Այդ գիւղից հինգ վերստ հեռու Խոսիմու եկեղեցում կան միայն մի քանի տպած եկեղեցական հին գրքեր:

Ձեռագիրներ. մասնաւոր սեփականութիւն Կ. Օհանջանեանի, Քիշիննի հայոց կոնսիստորիայի քարտուղարի 6 աւետարան՝ ՌՃԽԸ, XIV դ., XVI դ., ՌՃ, XVI և ՌՃԶ թուերից, 1 խորհրդատետր ՌՃՆ թ., 1 յայտաւուրք ՊԾԶ թ., 1 ճաշոց XIV դ., 1 սօնացոյց ՌԾԲ թ. և 1 ժամագիրք ՌՂԻԹ.: Վերջինս Ք. Յովհաննիսեանի մօտն է: Գրիգորոսյոյսում կան. 1 կարմիր աւետարան XVI (տրուած է չորս երեսի նկարը տախտ. № 11, 12), 1 շարական XV III դ. և 1 ժողովածու. վերջի երկուսը Ք. Յովհ. մօտ են: Ժողովածուի մէջ կան. ա. Պատմ. Հայունեաց խաչին, բ. Թուղթ ընդհանրական Կոստանդին Ա. կաթուղիկոսի, գ. Պատմ. Կիրակոս Գանձակեցւոյ, դ. Հատուած պատմութեան Զեհորայ, ե. Թուղթ Պիղատոսի առ Տիրեքրիսոս, գ. Թովմայի՝ Պատմ. Լանդթամուրի և է. Վարք Թովմայի Մեծսփեցւոյ գրեալ ի Կիրակոս վարդապետէ:

Արձանագրութիւններ. Կիլիա քաղաքում, Գանուր գետի վրայ, գերեզմանաքարերի վրայ ՌՃ, ՌՃՂԵ թուերից, Իզմայիլ քաղաքում՝ արձ. նորոգութեան տեղոյն Աստուածածին եկեղեցոյ ՌՄԺԲ թուից, և եօթ հատ գերեզմանաքարերի վրայ ՌԵ—ՌՃՂԸ թուերից, Օդեսայում՝ մէկը հնութեանց թանգարանում ՌՃՂԲ թուից, միւսը եկեղեցու բակում առանց թուականի: Այլ կերմանում գրի է առնուած 12 արձանագրութիւն, հայոց եկեղեցու պատերում, բաւում և դպրոցի բակում, որոնցից մէկը ՆԺԶ թուականինցն է, միւսները Պ, ՊՂԵ, ՊՂԶ, ԶԻԴ, ՌՃԳ, ՌՃԽԲ և ՌԲՃԵ թուերից, կան և անթուական: Կաֆայի, այժմ՝ Թէոդոսիայի հայոց 24 եկեղեցիներից մնացել են միայն չորսը և պ. Ք. Յովհաննիսեանը նոցա մէջ և շրջակայքում գտել է բազմաթիւ արձ. ՆՃԶ, ՆՂԶ, ՌԿ, ՌՂԲ, ԶԾ, ԶՃԹ, Պ, ՊԺԱ, ՊԺԵ, ՊԻԱ, ՊԾԷ, ՊԿԴ, Զ, ԶԽ, ԶԾ, ԶԿ, ԶԶԱ, ԶԶԵ, ՌԱ, ՌԾԵ, ՌՃԲ, ՌՃ, ՌՃԷ, ՌՃԽ, ՌՃԽԱ, ՌՃԽԲ,

ՌՃԾ, ՌՃԾԳ, ՌՃԶ, ՌՄ:

Նկարագրութեանս մէջ համարեա ոչինչ չէ ասուած ձեռագիր աւետարանների բովանդակութեան մասին, նմանապէս չի ասուած ոչ մի հին արձանագրութեան լուսանկար:

Arch. M. T. Movsessianz, *Исторія пер. Блблн.* քննադատութիւններ լյա տեանս:

H. Я. Марр, Критика и мелкія статьи (Труды II Раз. V) СПб, 1903 г. էջ 29—54.

И. Г. Церковный Вѣстникъ, 1903 г. Ноябрь, № 46, էջ 1460.

A. Meillet, *Revue critique d'histoire et de littérature*, 1904. 8 Février, № 6, էջ 103, 104.

M. A. Meillet, *Observations sur la graphie de quelques anciens manuscrits de l'évangile arménien.* Journal Asiatique, 1903 № November-Décember, էջ 23 (485—507).

— Մէլէ, Նկատողութիւններ հայոց մի բանի հին ձեռագիր աւետարանների գրչութեան մասին: Մնցեալ 1903 թ. ամառուայ ամիսները, մինչև յուլիսի վերջը, պրոֆ. Մէլէն Պարագից եկաւ Էջմիածին և սկսեց ուսումնասիրել Մայր Աթոռի Մատենադարանի №№ 229, 363, 369, 260, 257 (հին Դանիէլեան) և №№ 23, 362 (նոր համարներ) գրչագիր աւետարանները, հնագոյնը՝ 989, ամենավերջինը՝ 1071 թուականից և ներկայումս հայ լեզուաբանութեամբ հետաքրքրուողներին տալիս է իւր աշխատանքի արդիւնքը՝ նա քննել է. ա) Եւ-ի իւ-ի փոխուելը, բ) դէպքեր երբ ըստ հայկական հնչիւնական օրէնքի շեշտ չունեցող ի և ու չեն սեղմուել, գ) ընկեցուլ բայը, դ) աղ դերբայը, ե) ով հարցականը, զ) արարել բայը և է) եկեացես անցեալ պայմանականի փոփոխութիւնը:

Alexandros Anisckii, *Древніе армянскіе историки, какъ историческіе источники*, (Одесса, 1899 133 стр.)— Ա. Անիսկիյ, Հայոց հին պատմագիրները իբրև պատմական աղբիւրներ և նոյն հեղինակի՝

Исторія армянской церкви, (Кишиневъ, 1900 XI+306 +V ст.)—Հայոց եկեղեցու պատմութիւնը (մինչև XIX դարը):

Քննադատութիւն՝ *Н. Я. Марр*, Записк. Вост. Отдѣл. Имп. Русск. Арх. Общ. т XV. стр 0137—0150: Գրախօսականիս երկրորդ գրքի վերաբերեալ մասը կթարգմանենք ամբողջութեամբ, որովհետև նրա մէջ շոշափած են Հայագիտութեան և Հայոց եկեղեցական պատմութեան վերաբերեալ էական խնդիրներ:

I.

Պրոֆ. Մառը իւր գրախօսականը սկսում է նկատելով, որ երկու գրքերն էլ արժանի չեն, որ նոցա մասին խօսուէր ուսումնական մասնագիտական հրատարակութեան մէջ, բայց ստիպուած է խօսել, որովհետև այդ գրքերի վրայ «որ և է պատճառով լուրջ ուշադրութիւն են դարձրել հեղինակաւոր շրջաններում: Պէտք է ենթադրել» ասում է նա, «որ սուր հետաքրքրութիւն կայ դէպի Հայոց եկեղեցու անցեալը, բայց պակասում է հարկաւոր ծանօթութիւնը», այլապէս Անինսկու գրքերը գոհացում չէին տալ:

Առաջի գրքում Անինսկին հակառակ բաղմարովանդակ վերնագրին, խօսում է միայն Մարաբասի, Ղերուբնայի, Ագաթանգեղոսի, Զենոբի, Խորենացու և կողմնակի կերպով Փարպեցու և Եղիշէի մասին, «բայց այդ պատմագիրները քննելու համար հեղինակը թոյլ պատրաստութիւն ունի»:

1. Նա ծանօթ չէ այն բանի հետ, որ Հայ գրականութիւնը քրիստոնէութեան առաջի շրջանում համարեա բացառաբար կապուած էր ասորականի հետ, որ Հայ-վրացական եկեղեցին հնում մի էր և որ վրացիները երկար ժամանակ սերտ գրական առնչութիւն ունէին Հայերի հետ:

2. Նա ծանօթ չէ Հայկական գրականութեան նոր ուսումնասիրութիւնների հետ, կարծես գրում է երեսուն տարի առաջ. ա, նա պնդում է, որ Հայերը Մարաբասին իրենց հնագոյն պատմագիրն են համարում, բ, որ Ղերուբ-

նային հայ են ճանաչում, դ, չգիտէ Սերէոսի պատմութեան մէջ Անանունի մասին եղած գրականութիւնը:

3. Նա հայերէն այնքան քիչ գիտէ, որ հին և հինգ շփոթել է:

4. Լեզուի մասին գատողութիւններ է տալիս և մեծ սխալների մէջ ընկնում:

Պրօֆ. Մառը Անինսկու առաջի գլքի մէջ մասնանկշ անելով այդքան խոշոր և տարրական սխալների վրայ, երկարօրէն քննում է նրա Հայոց եկեղեցու պատմութիւնը ¹⁾:

II.

«Քանի որ իրերի գրութիւնը այդպէս է, գժուար էր հետեւեալ աշխատութիւնիցն էլ լաւ բան սպասել, որտեղ պ. Անինսկին հանգէս է գալիս ստեղծագործողի դերում և ի միջի այլոց հիմնում է այն «արդիւնքների» վրայ, որ ստացել է մեր ծանօթացած գրքից, որը մի տեսակ աղբիւրների քննութիւն է ներկայացնում:

Մասնագէտը այս երկրորդ աշխատանքի մէջ կդժուարանայ գրական մի բան ցոյց տալու, որ արժանի լինէր խրախուսանքի: Եթէ գլքի մէջ մի հետաքրքիր բան կայ, օրինակ այն տեղեկութիւնները, թէ ինչպէս հայ կաթողիկոսները և սոցա նշանակած մարգիկ Աղուանքից ար-

1) Անինսկու այդ աշխատութիւնը 1898 թ. ապրիլի 29-30, դեռ չտպուած, արժանացել է ռուսաց սրբազան սինօզի պատւաւոր մկայութեանը, որից յետոյ հեղինակը ուղղել և լրացրել է: Այդ գիրքը առ երեւոյթ վստահելի աղբիւր է համարուել և Մ. Կրամնոսթէնը, եկեղեցական իրաւունքի պրօֆեսորը, օգտուել է նրանից իւր աշխատութեան մէջ. Къ вопросу о свободѣ вѣры и вѣротерпимости. Инородцы на Руси, т. I, Положеніе неправославныхъ христіанъ въ Россіи (3-е изд. Юрьевъ. 1903, стр. 89), որը սակայն, ի դարմանս պրօֆ. Մառի, օգտուել է նաև Մաղախ Նեյմանի ժամանակից անվաւեր (апокрифъ) գրուածքից և շնորհիւ այդպիսի աղբիւրների, էջմիածնի վանքը դրել է Արարատ սարի դագաթին:

մատախիլ արին յունագաւանութիւնը (էջ 112), կամ թէ
ինչպէս XVII դարում հայոց եկեղեցում վերակենդանա-
ցաւ կրօնական կեանքը (էջ 269), այդ նիւթերը քաղուած
են վաղուց դիւրամատչելի հայ պատմագիրներից, որ թարգ-
մանուած են եւրոպական լեզուով և գլխաւորապէս ռու-
սերէն:

Եւ այդ սակաւաթիւ բովանդակալից երեսները, որ
խակապէս նուիրուած են հայոց եկեղեցու պատմութեանը,
պ. Ա.-ու գրչի տակ ոչ մի լուսաբանութիւն չեն ստացել,
եթէ չհաշուենք նրա այն բազմաթիւ թեթեւամիտ կարծիք-
ները, որոնք ըստ մեծի մասին չեն ապացուցուած և մինչև
անգամ հակասում են յայտնի փաստերի դէմ:

Ամենից շատ անձնապատան է այն միտքը, որ այդ
գիրքը հայոց եկեղեցու պատմութեան անունն է ստացել
նրա մէջ հեղինակը ոչ թէ ընդհանրապէս հայոց եկեղեցու
պատմութիւնն է տալիս, այլ այդ եկեղեցու յարաբերու-
թիւնը դէպի օտարափառ (инославный), հայոց տեօակէաից,
դաւանութիւնները, գլխաւորապէս դէպի յունագաւան և
կաթոլիկ եկեղեցիները, նեստորականութիւնը, ասորական
միաբնակութիւն և, ինչ որ շատ կարևոր է, հին-ասորական
եկեղեցու յարաբերութեանց խնդիրը ամբողջովին լուս-
թեան է մատնուած:

Այդ դեռ հերիք չէ. Ա.-ի գրքի այն մասը, որ յատ-
կացրած է հայոց եկեղեցու պատմութեան արտաքին յա-
րաբերութիւններին, պարզաբանուած է հայ եկեղեցու ներ-
կայացուցիչների, ուրիշ խօսքով հայ կաթոլիկոսների ար-
տաքին գործողութիւններով: Սակայն այդպիսի արտաքին
գործողութիւններ ունէին ոչ միայն կրօնական, այլ նաև
քաղաքական նշանակութիւն և, աւելի յաճախ քաղաքա-
կան քան կրօնական, դրանցով հարկ չկայ լուսաբանելու
հայոց եկեղեցու պատմութիւնը, այլ, ընդհակառակը, այդ
գործողութիւնների մէջ սովորաբար պէտք է որոնել հայ
գործիչների դէպի ոչ-հայ եկեղեցիները շատ դէպքերում
ունեցած յարաբերութեան լուսաբանութիւնը: Այդ պարզ
դրութիւնը իրեն համար չպարզած, պ. Ա.-ին անկանոն

կերպով է լուսաբանում Հայաստանի պատմութեան այն յատուկ կողմը, որը ըստ էութեան կազմում է նրա դրբի գլխաւոր առարկան:

Կարելի է կարծել որ լուսաբանութեան այդպիսի անկանոնութեանը նպաստել են բացի առարկայի չիմանալը նաև կանխակալ մտածողութիւնը, հեղինակի թշնամանանքը դէպի հայոց ազգային եկեղեցին և դէպի նա ունեցած արհամարհական վերաբերմունքը: Եւ, խոկապէս, հեղինակի արհամարհալից վերաբերմունքը ոչ միայն հեռու չէ ուսումնական անկողմնակալութիւնից և յատուկ ճշգրտութիւնից (корректность), որոնց վրայ եթէ աւելացնենք առարկայի լրջութիւնը և փափկութիւնը, պէտք էր որ (деликатность) աւելի ծանրացնէին հետախուզողի պարտքը, բայց նա մինչև անգամ անցնում է, ինձ թւում է, կարելի է ասել նաև պարզ քաղաքավարական սահմաններից: Այդպէս, օրինակ, ա) ակներև, դյանալով տալու հայոց եկեղեցուն ինքնատրոշման պարզ իրաւունք, պ. Ա.-ն մինչև անգամ զարմանում է այն բանի վրայ էլ, որ այդ եկեղեցին սրբոց կարգն է դասել հայ դաւանութեան համար մարտնչողներին: Նա շատ օտարօտի է գտնում, որ սրբացրել են Հերմոգէն պատրիարքի թղթի հայերէն պատասխան գրողի հեղինակին: «Պատասխանը», ասում է պ. Ա.-ին (էջ 124), «գրել է ոմն Ստեփաննոս Սիւնեցի, որին հայ եկեղեցին սուրբ է ճանաչել¹⁾», որը սակայն ծայրայեղ միաբնակ է», կարծես թէ միաբնակները չեն կարող սրբեր ունենալ, քանի որ պ. Ա.-ու կարծիքով, հայերը միաբնակ են: Միևս կողմից պ. Ա.-ին զարմանում է և այն բանի վրայ, որ Ներսէս Ծնորհալին էլ թէև չի պատկանել «միաբնակութեան ծայրայեղ կողմնակիցների թուին» (էջ 193) նմանապէս հայերից սրբոց կարգն է դասուում: Մեր հետախուզողը անտես է աւնում այն բնական և կարելի մտածմունքը, որ, ակներև, հայոց եկեղեցին երբ սրբաց-

1) Ծն. թարգմ. Ստեփաննոս Սիւնեցուն հայոց եկեղեցին սրբոց կարգը չէ դասել. նա սուրբ է կոչուում այս կամ այն հեղինակի կողմից և Յայսմաւուրքներում, բայց նրա անունը չկաջ տօնացոյցներում:

նում էր իւր սրբերին, նա չի ղեկավարուել այն հիմունքներով, որ ծրագրում է պ. Ա.-ն: բ) Խօսելով ազանու աւանդութեան մասին, որը Բարսեղ Մեծից թուել է դէպի ներսէսը, պ. Ա.-ն (էջ 29) գրում է. որ «այդ կողմնապահ անմտութիւնը հետեանք է ներսիսին Կապպատովիայի կետարական սովորական արքեպիսկոպոսից բարձր դասերու ցանկութեան... բացի այդ, ճշտութեամբ յայտնի չէ, արդեօք այդ ժամանակուանից թէ փոքր յետոյ, սկսել են հայոց գլխաւոր եպիսկոպոսին կաթողիկոս անուանել, և այդ նրա համար, հայերի բացատրութեամբ, որ նրա իշխանութեան տակ կային բազմաթիւ եպիսկոպոսներ»: Ներսիսի մասին եղած աւանդութիւնը բոլոր քրիստոնեայ եկեղեցիներում պատմուած հազարաւոր աւանդութիւններից մէկն է, իսկ ինչ վերաբերում է Ա.-ու բացատրութեանը, միանգամայն հիմքից զուրկ է, որովհետեւ դեռ մինչև ներսէսը «հայոց գլխաւոր եպիսկոպոսը» աւելի նշանակութիւն է ունեցել, քան «սովորական արքեպիսկոպոսը» և, եթէ ոչ կաթողիկոս տիտղոսը, տիտղոսի շատ իրաւունքները յատուկ էին հայաստանի հողերը հովուապետին: Ի միջի այլոց Հայաստանի Դարձի նորագիւտ արարական բնագրի, Ազատանդեղոսի հնագոյն թարգմանութեան մէջ, Գրիգոր Լուսաւորիչը կոչուում է «կաթողիկոս»: գ) Մինչև անգամ, երբ խօսք է լինում հայոց եկեղեցու սրբոց նշխարների մասին, մի եկեղեցի, որը անպայման շատ հին և կանուխ ժամանակներում սերտ յարաբերութեան մէջ էր ս. Երկրի հետ¹⁾, պ. Ա.-ին առանց որևէ հիմքի այդ նշխարները կասկածելի է յայտարարում. օրինակ, առանց ապացուցանելու է խօսում (էջ III նակ. 127, 128) Քրիստոսի կենաց փայտի նշխարներով սրբութիւնների և խաչերի մասին և համարում է նոցա «ծագումով կասկածելի» և ըստ երևոյթին միայն նրա համար, որ դեռա գտնուում են ոչ-պրավոսլաւ հայերի ձեռ-

1) Նշխարներ և ս. խաչի մատուցներ հայոց եկեղեցին ստացել է զանազան տեղերից, աւելի յետոյ Կոստանդնուպոլսից յունաց եկեղեցու ներկայացուցիչներէ, որ իբրև ընծայ տալիս էին հայ իշխաններին և հողերը պետերին:

քում: դ) Պ. Ա.-ին առհասարակ խիստ կասկածոտ է, երբ նա հանդիպում է հայոց եկեղեցու կեանքի լուսաւոր կողմերին, այդպէս օրինակ, ս. գրքի հայերէն թանգմանութեանը, նա կասկածանքով է իւր մտքերն արտայայտում, կասկածանք, որ անպայման ոչ մի հիմք չունի, բայց գործի հեղինակի արժանիքի վրայ ստուեր է ձգում «հայերի կարծիքով, ասում է պ. Ա.-ն, այդ թարգմանութիւնը շատ թարգմանութիւններից գերազանց է, որը իբր թէ ապացուցել են շատ եւրոպական ուսումնականներ» (էջ 39):

Ի՞նչ էր արգելում հեղինակին տեղեկութիւն հաւաքել նիւթին վերաբերեալ մասնագիտական գրականութիւնից, որտեղ նա կգտնէր եւրոպացիների ոգևորուած կարծիքը հայոց թարգմանութեան մասին: Այդ բանը նրան հնարաւորութիւն կտար ընթերցողին տարակուսանքի մէջ չթողնելու, ոչ միայն հայերէն թարգմանութեան յատկութեան մասին, այլ և հայ ուսումնականների բարեխղճութեան մասին, որոնք պ. Ա.-ու կարծիքով ընդունակ են ամեն տեսակ առասպել հնարելու:

Այդպիսով ակնյայտնի երևում է հեղինակի դիտաւորեալ յեղաշրջումն. բայց հարցը դրա մէջ չէ, այլ թէ պ. Ա.-ին որքան քիչ տեղեկութիւն ունի այն բոլորի մասին, ինչ վերաբերում է Հայաստանին, նրա լեզուին, եկեղեցուն և գրականութեանը: Ահա օրինակներ. 1) պ. Ա.-ին թիւր մեկնութիւն է տալիս հայոց գրքերի գիւտին, համարելով այդ քաղաքական, ուրիշներից բաժանման մի գործողութիւն (էջ 27), մինչդեռ դա ամենավերջի, համեմատաբար առած, հայադասակէս է, որը մեր հեղինակի նկարագրութեան մէջ ներկայանում է ժամանակակից խնդիր, հայհայկական սեպարատիզմի առթիւ ծագած երկիւղի քողի տակ, որը, կարելի է ասել, արդէն մոգայից գուրս է դալիս: Հայոց այբուբէնը ասորական եկեղեցու քարոզչական գործունէութեան հետեանք է, որը միշտ և ամեն տեղ հէնց այն պատճառով է անօրինակ յաջողութիւն ունեցել Աստուծոյ խօսքը քարոզելու մէջ, որ իրեն հետու էր պահում ազգային — պետական քաղաքականութիւնից:

2) Արդէն ցոյց է տրուել, որ պ. Ա.-ին ծանօթ չէ հայոց լեզուով ս. գրքի թարգմանութեան մասին եղած հին գրականութեան հետ: Հասկանալի է, որ ամենեին ծանօթ չէ այդ հարցի մասին եղած նոր գրականութեան, չգիտէ գտնէ երկրորդ ձեռքերից:

3) Պ. Ա.-ին վերիվերայ հաստատում է, որ «Հայաստանում դասաւարտութիւնը դպրոցների մէջ գտնւում էր կիսակիրթ վարդապետների և հոգևորականների ձեռքում» (էջ 146), տգիտանալով, որ, առաջին, կրթութիւնը գրտնւում էր հայ հոգևորականութեան զարգացած մասի ձեռքում, որոնք յատկապէս կոչուած էին տարածելու լուսաւորութեան և գրականութեան գործը, այն է, «վարդապետների» ձեռին, և որ, երկրորդ, ունինք, թէև ոչ անթերի, հետաքրքիր տեղեկութիւններ՝ թէ ինչ ծրագրով էին հնում պարապում Հայաստանի մէջ (Н. Марръ, Сборникъ Притчъ Вардана, § 431):

4) Պ. Ա.-ին հաստատում է, որ իբր թէ վարդապետները «յայտնի չէ ում կողմից էին հրաւիրւում վարժապետութիւն անելու և կամ թէ ինչ մասնաւոր անձինքներից էին այդպիսի իրաւունք ստանում» (էջ 278): Ակնբռն է, որ հեղինակը միանգամայն տնտեղեակ է հին հայոց եկեղեցու ամենահետաքրքիր հաստատութիւններից մէկի, կրթուած վարդապետների դասակարգի խնդրին (համեմատիր ի մասնաւորի Ն. Մառ, Тексты и Разысканія V, էջ 34—36): Վարդապետների խնդրի առթիւ պ. Ա.-ին չի կարողացել հարկաւոր օգուտ ստանալ նաև իրեն ծանօթ (էջ 283) Երուսաղէմի հայոց վերջի ժողովի 8-րդ կանոնից, որը իսկապէս նոր բան չէր մտցնում, այլ միայն հաստատում էր, այն էլ մի քանի թեթևութիւններով, այն հին պահանջները, որին պարտաւոր էին ենթարկուելու «վարդապետացու» ուխտեալները¹⁾:

1) Այժմ այդ հաստատութիւնը միանգամայն զրկուած է իւր բարձր նշանակութիւնից և, մինչև անգամ հայոց եկեղեցու ներկայացուցիչներէ մէջ, ըստ երևոյթին, պարզ հասկացողութիւն չկայ վարդապետների հնում ունեցած իրաւասութեան

5) Վանականութեան մասին պ. Ա.-ին պնդում է, որ, նախ՝ «հայ վանականները զեկավարուում էին այն ձեռնարկներով և կանոններով, որ ունէին նոցա կապալադովկիայի ուսուցիչները» (էջ 64) և, երկրորդ՝ իբր թէ ճգնաւորական վանականութիւնը հայերի մէջ ուշ է մտել (էջ 274) և ապացոյցանելի է սկսած թէ դարից։ Ակներև է, հեղինակը ամենափոքր հասկացողութիւն չունի Հայաստանի վանականութեան վաւերական պատմութեան մասին, նա միանգամայն անտեղեակ է հայկական վարքագրական գրականութեանը։

6) Ա.-ու կարծիքով (էջ 232), «Յակոբ կաթողիկոսի օրով են տպուել առաջի հայերէն գրքերը՝ Ոսկան ուսումնականի շնորհիւ»։

7) Ծննդեան և Մկրտութեան տօները չանջատելու պատճառը հայերի կողմից հեղինակը թիւր է մեկնել (օրին. էջ 36, նկատ. 1). ուստաց լեզուով այժմ այդ հարցի վերաբերմամբ մասնագիտական աշխատութիւն կայ (Тексты и Разыскания по арм. груп. фил. кн. I):


8) Զուղայի հայոց դպրութի մասին պ. Ա.-ին կարողանում է միայն այսպիսի տեղեկութիւններ տալ. «Պարսկաստանում ծնուած սերունդը (հայերից) հաճոյքով հրաժարուում էր քրիստոնէութիւնից և ընդունում էր մահմետական հաւատը» (էջ 268 — 269, 279)։ Հայոց եկեղեցու պատմութեան հեղինակը դրանից բացի ուրիշ բան հարկաւոր չի համարել ասելու Զուղայի հայոց եկեղեցական կեանքի մասին, պէտք է կարծել, տեղեկութիւն չունենալու պատճառաւ. մինչդեռ այդտեղ դուրս են եկել արևմտեան մի-

մասին։ Այդ պատճառով է միջև այլոց, յիշեալ վերջի ժողովի 8-րդ կանոնը, որով վարդապետը վարդապետութեան ուխտեալին տալիս է այդ աստիճանը, անհասկանալի է մնացել Պատմութիւնս Առաքելական հայոց եկեղեցւոյ (Վաղարշապատ, 1884, էջ 264) հեղինակին, որ նոյնպէս վարդապետ էր, այժմ Յուսիկ եպիսկոպոս Մովսիսեան, որը հերքել է յիշեալ կանոնի ուղիղ միտքը այն հիման վրայ, որ ձեռնադրութեան իրաւունքը վերապահուած է միայն եպիսկոպոսին։

սխնարները գործունէութեան դէմ յայտնի մարտողներ
 և, չնայած ամեն տեսակ դժբախտութիւնների, մինչև
 վերջի ժամանակը պահպանել են քրիստոնէական ձեռա-
 գրերի ամենահետաքրքիր ժողովածու, որի թիւը, ինչպէս
 յայտնի եղաւ, 600-ի է հասնում ¹⁾։

(Շարունակելի)։

Մեսրոպ վարդապետ



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Դ.

ԲԱՂԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՍՏԱԼԻՑ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

Ասել չի ուզիլ, որ կան խաղեր, որոնք հենց նոր կազ-
 մուած ժամանակ ևս անմիտ բաներ են եղել։ Անշնորհք
 երգիչներն ազճատուած խաղերի նմանողութեամբ, կամ
 պատրաստի երգերից լսկ յանգեր փոխ առնելով սարքում
 են տուել՝ միայն, ինչպէս ասում են, յանգը յանգին
 բերելով՝ առանց մտքին ուշադրութիւն դարձնելու։

Սակայն անխմատ խաղերի մեծ մասը, ինչպէս վերե-

1) Ման. թարգմ. Պրոֆեսորի յիշած այդ ժողովածուն, չնչին
 բացառութեամբ, պահւում է Նոր-Ջուղայի հայոց ս. Փրկչի վան-
 քում։ 1853 թ. Գալ. Ներմազանեանը կազմել է այդ ձեռագրերի
 ցուցակը, որի արտագրութիւնը, կատարուած 1862 թ. սկազե-
 միկ Բրոսսէի համար, այժմ գտնւում է Պետերբուրգի գիտու-
 թեանց ճեմարանի ասիական Մուզէի գրադարանում։ Գ. Ներ-
 մազանեանը ցուցակագրել է 202 ձեռագիր վանքի մէջ, 6-ն էլ
 եպիսկոպոսի մօտ։ Երկու տարի առաջ, 1902 թ. ամառուայ ար-
 ձակուրդներին Պետերբուրգի համալսարանը և այնտեղի Հայոց
 եկեղեցական խորհուրդը Ն.-Ջուղա ուղարկեցին ուսանող Սմբատ
 սարկաւազ Տէր-Աւետիսեանին, որն աւելի մանրամասն կերպով
 ցուցակագրեց Մասի յիշած մօտ 600 ձեռագրերը։